

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս էջերուն մեծագոյն մասը հրատարակուեցաւ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ՝ «Կենսագրական», «Կոլոտ», խորագրին տակ (Տէս Հանդէս 1903, Թիւ 6, 7, 8-9, 10, 11, 12): Կոլոտի անօին եւ գործունէութեան շուրջը ուսումնասիրուած ինդիքներ կարծենք թէ կարեւոր են թէ Հայ. Եկեղեցւոյ Պատմութեան եւ թէ Հայ Մատենագրութեան տեսակէտներով. ինդիքներն՝ որոնք մասերն են մեր այն ծրագրին, որ «Նիւթեր Եկեղեցական Պատմութեան համար» ընդհանուր խորագրին տակ կ'ընդգրկէ Հայ. Եկեղ. Պատմութեան մթին եւ դեռ չուսումնասիրուած եւ հետաքրքրական ուրիշ կէտերը:

* * *

Հայ. Եկեղեցւոյ Պատմութեան ԺԻ. եւ ԺԸ. դարերուն դէպքերը կարեւոր են եւ դէմքերը՝ Նշանաւոր: Պատմութեան համար թէեւ առատ, բայց շատ հում նիւթեր կան այդ ժամանակամիջոցին մէջ, որոնք, սակայն, պահանջուած կերպով չ'են ուսումնասիրուած դեռ՝ կրկին պատճառներով. նախ՝ պատմական դէպքերը բարդ եւ բազմակողմանի են եւ իրարու հետ կնճռոտած. երկրորդ, այդպիսի ուսումնասիրութեան մը համար պէտք եղած նիւթերը լոյս տեսած չ'են բոլորովին:

Զամչեան՝ 1784ին կը կնքէ իր պատմութիւնը, վերջին տարիներուն դէպքերը չափէն աւելի սղագրելով: Սիմօն Կաթողիկոսի «Ջամբոռ» շատ միակողմանի է, ժամանակակից պատմութեան հարազատ աղբիւր մ'ըլլալու համար. անշուշտ իր այն մասերուն մէջ, որ Հայ. Եկեղեցւոյ համար ընդհանուր հանգամանք մ'ունին: Մսեր Մագիստրոսի «Պատմութիւն Կաթողիկոսաց Եջմիածնի», 1763-1831, կէս դարէ քիչ մ'աւելի ժա-